Աթթալան հատկապես կարեւորեց հայության գործուն մասնակցությունը Լիբանանի տնտեսական կյանքում:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը մաղթեց, որ Աստված պահի ու պահպանի Լիբանանը խաղաղության եւ անվտանգության մեջ, իսկ հավատարմատարին շնորհի բարի եւ արդյունաշատ առաքելություն Հայաստանում:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆ ԸՆԴՈՒՆԵՑ ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հոկտեմբերի 4-ին Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոս ընդունեց Լիբանանի Հանրապետության Խորհրդարանի նախագահ Նաբիհ Բըրրիին՝ ուղեկցությամբ ՀՀ ԱԺ փոխնախագահ Սամվել Նիկոյանի:

Ողջունելով մեծարգո հյուրին՝ Վեհափառ Հայրապետը գոհունակությամբ անդրադարձավ երկու ժողովուրդների եւ երկրների միջեւ սերտ հարաբերություններին՝ նշելով նաեւ, որ լիբանանահայերը, որպես արժանավոր քաղաքացիներ մշտապես գնահատվել ու սիրվել են Լիբանանի ժողովրդի ու իշխանությունների կողմից: Այս առիթով Նորին Սրբությունն ի դեմս պարոն Նաբիհ Բըրրիի իր գնահատանքն ու շնորհակալությունը հայտնեց Լիբանանի ժողովրդին՝ Հայոց ցեղասպանության տարիներից ի վեր Լիբանանում հանգրվան գտած հայորդիների հանդեպ ցուցաբերած ջերմ ընդունելության եւ հոգատարության համար: Վեհափառ Հայրապետը նաեւ իր մասնավոր շնորհակալությունն ուղղեց Լիբանանի կառավարությանը՝ Հայոց ցեղասպանության ճանաչման եւ դատապարտման ուղղությամբ լուրջ քայլեր ձեռնարկելու եւ արցախյան հակամարտության կարգավորման հարցում որդեգրած հավասարակշիռ դիրքորոշման համար:

Իր հերթին՝ Լիբանանի Խորհրդարանի նախագահը մեծ գնահատանքով խոսեց Լիբանանի քաղաքական, տնտեսական եւ մշակութային կյանքում հայ քաղաքացիների ունեցած կարեւոր ներդրման մասին, վերհիշեց նաեւ 1997 թվականի իր այցը Մայր Աթոռ Ս. Էջմիածին:

Հանդիպման ընթացքում խոսվեց նաեւ միջկրոնական երկխոսության մեջ Հայ Եկեղեցու ներգրավվածության, ինչպես նաեւ տարածաշրջանում խաղաղության հաստատմանն ուղղված կրոնական առաջնորդների համատեղ ջանքերի մասին:

Հանդիպման ավարտին Նորին Սրբությունը, խաղաղություն եւ բարօրություն մաղթելով Լիբանանին ու լիբանանյան ժողովրդին, վստահություն հայտնեց, որ խորհրդարանի նախագահ Բըրրիի այցը Հայաստան նոր լիցք կհաղորդի երկկողմ հարաբերությունների զարգացմանը:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ